երեխաներ, առաջարկելով ներքեւը նստողներին իրանց զամբիւղի պտուղները կամ զովացուցիչ ըմպելին: Նոյն այդ ուղիներով է, որ դերասանները ամեն անգամ բարձրանում են բեմ ու ելնում իրանց դերը աւարտելուց յետոյ:

Զարմանալի պարզ ու նախնական կեանք է թագաւորում այդ թատրոնական հասարակութեան մէջ: Ներկայացումները տեւում են անվերջ երկար, ուրեմն ինչո՞ւ իզուր նեղւեն: Ճապոնացին այնտեղ իրան բոլորովին տան պէս է զգում: Նստած իր արկղում՝ նա ճաշում է, խմում, ծխում ու հետեւում խաղին հանգիստ ու հանդարտ: Եթէ յոգնեցաւ բեմին ու խաղին նայելուց, նա անվրդով բաց է անում դրացի արկղից իրան բաժանող ուղին եւ առանց քաշուելու տարածում է իր մարմնի խոնջացած անդամները ու յաճախ էլ քնում:

Երբ աչքս քիչ վարժւեց այդ արկղների աշխարհին, նայեցի վերջապէս դէպի բեմը, ուր նոյնպէս շատ բան կար մանկօրէն միամիտ ու տարօրինակ: Այսպէս օրինակ վարագոյրը դէպի վեր չի բարձրանում, ոչ էլ ընդհանրապէս բացւում է, այլ նրան զօռով բաց են անում. ծառան բռնած նրա փէշից վազում է գլխապատառ բեմի ամբողջ լայնքովը, մինչեւ որ բոլորովին հաւաքում է: Իսկ մի քանի թատրոններում վարագոյր բոլորովին չկայ: Բայց այդ դէպքում բեմը շարժական է եւ դառնում է իր առանցքի վրա իր բոլոր տնակների, ծառերի ու միւս դեկօրացիաների հետ միասին, հանդիսականների աչքի առաջ:

Բեմի կողմնակի պատի տակ մի փոքրիկ բարձրութեան վրա նստած էր մի երիտասարդ ճապոնուհի գիտառը ձեռքին. օրկեստրի դեր էր կատարում նա, նւագում էր ու երգում, խաղին աւելի արտայայտութիւն տալու համար: Բնորոշ էր նոյնպէս մի ճապոնացու դերը, որ կանգնած էր միւս պատի տակ